Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, Գ.Խ. Նախագահի

Ն. Խ. Սարիբեկյան

« 31 » 08 20 16թ.

ԿԱՐԳ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կարգով սահմանվում են օտարերկրյա քաղաքացիների /այսուհետ՝ օտարերկրացիներ/ ընդունելությունը Ավանդական բժշկական համալսարան /այսուհետ ԱԲՀ/:

1.2 Սույն կարգով ԱԲՀ ընդունված ուսանողների համար ուսուցումը կարող է կազմակերպվել գրական հայերենով կամ օտար լեզվով /անգլերեն/:

II. Օտարերկրացիների ընդունելության կազմակերպումը

2.1 ԱԲՀ-ում օտարերկրացիները բարձրագույն մասնագիտական կրթություն կարող են ստանալ «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով նախատեսված ուսուցման առկա ձևով:

2.2 Օտարերկրացիները կարող են դիմել ԱԲՀ նաև ընդհանուր հիմունքներով՝ դիմորդի փաստաթղթերը ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից փորձաքննությունից՝ փաստաթղթում առկա տեղեկատվության իսկության ստուգումից և հյուպատոսական վավերացման առկայությունը ճշտելուց, ինչպես նաև հաշվառելուց հետո:

2.3 Սույն կարգով բակալավրի կամ անընդհատ և ինտեգրացված որակավորման աստիճան ստանալու համար ԱԲՀ կարող են դիմել այն օտարերկրացիները, ովքեր ստացել են առնվազն ՀՀ միջնակարգ կրթության մակարդակին համապատասխան կրթություն և ունեն նշված կրթությունը հավաստող ավարտական փաստաթուղթ/ ատեստատ, վկայական/:

2.4 Սույն կարգով մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ԱԲՀ կարող են դիմել այն օտարերկրացիները, ովքեր ստացել են առնվազն բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորման աստիճանին համապատասխան կրթություն և ունեն նշված կրթությունը հավաստող ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/:

2.5 ԱԲՀ-ում կրթություն ստանալու համար օտարերկրացի դիմորդների ընդունելությունն իրականացվում է դիմորդների փաստաթղթերի ուսումնասիրության և գիտելիքների ստուգման /այդ թվում նաև հեռավար ուսուցման ձևի հնարավորության/ հիման վրա:

2.6 Հետագա ուսուցման լեզվին ԱԲՀ-ի համապատասխան մասնագիտության ընդունելության համար նախատեսված քննական առարկաներին չտիրապետող օտարերկրացիները պետք է ուսուցումն անցնեն Համալսարանի նախապատրաստական դասընթացում:

2.7 Գիտելիքների ստուգումների արդյունքների հիման վրա դիմորդները կարող են ընդունվել առաջին կուրս:

2.8 Գիտելիքների ստուգումն անցկացվում է ԱԲՀ-ի կողմից սահմանված գիտելիքների ստուգման կարգով՝ ՀՀ միջնակարգ կրթական ծրագրով:

2.9 Մագիստրոսի կրթական ծրագրով ուսանելու համար դիմած օտարերկրացիների ընդունելությունն իրականացվում է դիմորդների փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա: Հետագա ուսուցման լեզվին չտիրապետող օտարերկրացիները պետք է ուսուցման դասընթացն անցնեն ԱԲՀ-ի նախապատրաստական դասընթացում:

2.10 ԱԲՀ-ում գործող կրթական ծրագրերով երկրորդ մասնագիտություն ստանալու համար դիմած օտարերկրացիների ընդունելության ժամկետը, կուրսը և մյուս պայմանները սահմանում է դիմումները քննարկելու նպատակով ստեղծվող ատեստավորման հանձնաժողովը, որը ձևավորվում է ԱԲՀ-ի ռեկտորի հրամանով:

2.11 Սույն կարգով ԱԲՀ դիմորդների ընդունելությունն իրականացվում է նախարարության կողմից փաստաթղթերի փորձաքննությունից՝ փաստաթղթում առկա տեղեկատվության իսկության ստուգումից և հյուպատոսական վավերացման առկայությունը ճշտելուց, ինչպես նաև հաշվառելուց, միասնական տեղեկատվական բանկի ստեղծումից հետո, ՀՀ Կրթության և գիտության նախարարի ուղեգիր-նամակների հիման վրա, ԱԲՀ ղեկավարի հրամանով:

2.12 Սույն կարգով ԱԲՀ օտարերկրացիների ընդունելության ժամկետները սահմանվում են ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով:

III. Նախապատրաստական դասընթացների կազմակերպումը

3.1 Նախապատրաստական դասընթացների առարկայական ծրագրերը, գնահատման համակարգը մշակվում ու հաստատվում են ԱԲՀ-ի կողմից:

3.2 Նախապատրաստական դասընթացում ուսանող օտարերկրացիները համարվում են ԱԲՀ-ի ուսանողներ: Նախապատրաստական դասընթացներն իրականացվում են միայն առկա ուսուցման ձևով, և դրանց տևողությունը պետք է կազմի առնվազն 6 ամիս:

3.3 Նախապատրաստական դասընթացից հեռացված կամ ազատված ուսանողները նախապատրաստական դասընթացում չեն վերականգնվում: Նախապատրաստական դասընթացից տեղափոխություն այլ բուհի նախապատրաստական դասընթաց չի թույլատրվում:

3.4 Նախապատրաստական դասընթացում ուսուցումն ավարտվում է ավարտական քննություններով, որոնք ներառում են տվյալ մասնագիտության ընդունելության քննություններով նախատեսված առարկաները: Նախապատրաստական դասընթացի ավարտական քննությունների վերահանձնում չի թույլատրվում՝ բացառությամբ հիվանդության պատճառով քննությանը չներկայանալու դեպքերի՝ համապատասխան տեղեկանքի առկայության դեպքում:

3.5 Նախապատրաստական դասընթացի ավարտական քննություններից դրական գնահատական ստացած ուսանողներին տրվում է համապատասխան ավարտական փաստաթուղթ /վկայական/՝ համապատասխան ներդիրով:

3.6 Նախապատրաստական դասընթացի ավարտական քննությունները հաջողությամբ հանձնած ուսանողները հրամանագրվում են առաջին կուրս: Նախապատրաստական դասընթացն ավարտելիս «անբավարար» գնահատականներ ստացած ուսանողներին տրվում է համապատասխան տեղեկանք:

3.7 Մեկ բարձրագույն ուսումնական հաստատության նախապատրաստական դասընթացի վկայականը կարող է հիմք հանդիսանալ ԱԲՀ-ում ուսումն առաջին կուրսում շարունակելու համար՝ ընդունելության համար սահմանված և նախապատրաստական դասընթացում ուսանած առարկաների համապատասխանության դեպքում:

IV. Օտարերկրացիների ուսուցման կազմակերպման պայմանները

4.1 Օտարերկրացիների ուսուցումը, հեռացումը /ազատումը/ և վերականգնումը, շարժունությունն իրականացվում են ԱԲՀ-ում գործող կարգերին համապատասխան: Սույն կարգով ընդունված ուսանողների հեռացման /ազատման/ և շարժունության մասին տեղեկություններն ԱԲՀ-ն ներկայացնում է նախարարություն՝ համապատասխան որոշում ընդունելուց հետո, երկշաբաթյա ժամկետում:

4.2 Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընդունելության ավարտից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ԱԲՀ-ն ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացնում ընդհանուր հիմունքներով ընդունված օտարերկրացիների և սույն կարգով ընդունվածների մասին տեղեկատվություն:

4.3 ԱԲՀ-ն ապահովում է օտարերկրացու հետ կնքվող պայմանագրում ՀՀ մուտքի արտոնագիր և ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջների մասին առանձին դրույթի ներառումը:

4.4 Օտար լեզվով ուսուցում կազմակերպելու դեպքում ԱԲՀ-ն՝

- տվյալ մասնագիտությամբ դասավանդվող հիմնական առարկաների գծով ապահովում է նախարարության կողմից յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ ատեստավորված, օտար լեզվով դասավանդելու երաշխավորություն ստացած կամ միջազգայնորեն ընդունված լեզվի իմացության մասին փաստաթուղթ ներկայացրած մասնագետներով.
- կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ՝ օտար լեզվով դասավանդող մասնագետների համար:

V. Փաստաթղթերը ներկայացնելու և անձնական գործը վարելու կարգը

5.1 Սույն կարգին համապատասխան ԱԲՀ ընդունվող դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի անունով.
2. նախարարության կողմից տրամադրված դիմում-հարցաթերթիկ՝ համաձայն ձևի.

3. բժշկական տեղեկանք ընդհանուր առողջական վիճակի մասին: Սույն տեղեկանքը կարող է տրված լինել նաև ՀՀ բժշկական կազմակերպությունների կողմից.
4. անձնագրի կամ ծննդյան վկայականի բոլոր էջերի պատճենները և /կամ/ մկրտության վկայականը.
5. կրթական աստիճանի ավարտական փաստաթղթի պատճենը.
6. 3x4 չափսի 4 լուսանկար,
7. ինքնակենսագրություն /CV/՝ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով.

5.2 Սույն կարգի 5.1 կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերն ընդունվում են քննարկման՝ օտարերկրյա պետությունում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության կողմից հյուպատոսական վավերացման առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենքներով կամ միջազգային պայմանագրերով:

5.3 Փաստաթղթերը նախարարություն ներկայացվում են՝
1. դիմորդի կողմից անձամբ կամ նրա լիազորված անձի կողմից.
2. ԱԲՀ-ի կողմից.
3. օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով.
4. փոստով /այդ թվում՝ էլեկտրոնային փոստով/՝ նախարարության պաշտոնական հասցեով:

5.4 Ներկայացված դիմումը կարող է մերժվել, եթե սույն կարգի 5.1 կետում նշված փաստաթղթերից որևէ մեկը պատշաճ կերպով չի ներկայացվել, կամ փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ամբողջացվել, ինչպես նաև սույն կարգի 2.11 կետի պահանջներին չհամապատասխանելու դեպքում:

5.5 ԱԲՀ-ում պահվող յուրաքանչյուր օտարերկրացու և սույն կարգով ընդունված ուսանողի անձնական գործում պետք է լինեն նաև հետևյալ տեղեկությունները՝
1. ուսումնառության տարիների ընթացքում քաղաքացիության փոփոխության կամ ՀՀ երկքաղաքացիություն ձեռք բերելու դեպքում՝ նոր անձնագրի պատճենը.
2. ուսումնառության տարիների ընթացքում օտարերկրացիներին վերաբերող փաստաթղթերի /որոշումներ, հրամաններ և այլն/ պատճենները:

Հավելված
Հայաստանի Հանրապետության կրթության
և գիտության նախարարի
2007 թ. հուլիսի 06 թիվ 629-Ն հրամանի

ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՄՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

Սույն կանոնները ընդունվում են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան ու նպատակ ունեն կարգավորելու օտարերկրացիների Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններ և գիտահետազոտական հիմնարկներ ընդունվելու պայմանները:

1. Հայաստանի Հանրապետության միջին և նախնական մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատություններ ու գիտահետազոտական հիմնարկներ դիմած օտարերկրացիների փաստաթղթերի ուսումնասիրությունը, փորձաքննությունը և հաշվառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության /այսուհետ՝ նախարարություն/ կողմից, որից՝ հետո փաստաթղթերն ուղեգիր-նամակով ուղարկվում են համապատասխան ուսումնական հաստատություններ՝ դիմորդների գիտելիքների ստուգումը և ընդունելությունը կազմակերպելու համար:

2. Նպաստի ձևով ուսման վարձի փոխհատուցմամբ տրված կրթաթոշակային տեղերի համար դիմած օտարերկրացիների ընտրությունը կատարվում է.

1) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև կնքված կրթական և գիտական համագործակցության մասին Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա,

2) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սփյուռքահայ քաղաքացիներին հատկացվող ուսման վարձի փոխհատուցմամբ տրված կրթաթոշակային տեղերի հիման վրա:

3. Նախարարությունն իրականացնում է օտարերկրացի դիմորդների դիվանագիտական ոլորներով և փոստով ստացված փաստաթղթերի ընդունումը և դրանց ուսումնասիրությունից հետո ուղարկում է համապատասխան ուսումնական հաստատություններ:

4. Հայաստանի Հանրապետությունում միջնակարգ կրթություն ստացած և Հայաստանում բնակվող օտարերկրացիները Հայաստանի Հանրապետության միջին և նախնական մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատություններ ու գիտահետազոտական կենտրոններ կարող են ընդունվել ընդհանուր հիմունքներով:

5. Օտարերկրացիները, որոնք ցանկանում են սովորել Հայաստանի Հանրապետությունում, պետք է նախարարություն կամ տվյալ երկրում գտնվող Հայաստանի Հանրապետության դեսպանություն ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

✓ 1) Հարցաթերթիկ /սահմանված ձևը կցվում է/:

2) Դիմում՝ հասցեագրված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին, որի մեջ պետք է նշվի ընտրված մասնագիտությունը և ուսումնական հաստատությունը:

3) Ինքնակենսագրություն:

4) Համապատասխան կրթության վկայականի պատճենը, նշելով ուսումնասիրված առարկաները և հանձնված պետական քննությունների գնահատականները /նիշերը/:

5) Բժշկական եզրակացություն ընդհանուր առողջական վիճակի վերաբերյալ: Սույն տեղեկանքը կարող է տրված լինել նաև Հայաստանի Հանրապետության բժշկական կազմակերպությունների կողմից:

6) Անձնագրի կամ ծննդյան վկայականի բոլոր էջերի պատճենները:

7) 3 x 4 սմ չափսի 4 լուսանկար:

8) Ասպիրանտուրա ընդունվել ցանկացողները լրացուցիչ ներկայացնում են ռեֆերատ կամ հրատարակված աշխատությունների պաշտոնապես հաստատված ցանկը, նշելով հրատարակման թիվը և վայրը, 2-3 հրատարակումների պատճենները:

9) Փաստաթղթերը /5-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը/ ընդունվում են քննարկման միայն հյուպատոսական վավերացման առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ միջազգային պայմանագրերով, որոնց մասնակից են Հայաստանի Հանրապետությունը և տվյալ պետությունը:

6. Այն երկրներում, որտեղ չեն գործում Հայաստանի Հանրապետության դեսպանություններ կամ ներկայացուցչություններ սույն կանոնների 5-րդ կետով պահանջվող փաստաթղթերը կարող են ներկայացվել նախարարություն անձամբ կամ դիմորդի

ներկայացուցչի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում վավերացվելուց հետո:

7. Ներկայացված դիմումը կարող է մերժվել, եթե 5-րդ կետում նշված փաստաթղթերից որևէ մեկը պատշաճ կերպով չի ներկայացվել կամ փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ամբողջացվել:

8. Փաստաթղթերը և ռեֆերատները ներկայացվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով:

9. Նախապատրաստական բաժնում ընդունելությունը կատարվում է տվյալ տարվա հուլիսի առաջին տասնօրյակից մինչև նոյեմբերի առաջին տասնօրյակն ընկած ժամանակահատվածում, իսկ բուհական և հետբուհական մասնագիտական կրթության համար /առկա ուսուցում/՝ հուլիսի առաջին տասնօրյակից մինչև օգոստոսի վերջին տասնօրյակն ընկած ժամանակահատվածում:

10. Օտարերկրացիները /բացի ասպիրանտներից և հայցորդներից/, որոնք չեն տիրապետում հայերեն, կամ ռուսերեն կամ անգլերեն լեզուներին ընդունվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների նախապատրաստական ֆակուլտետներ /բաժիններ/ մեկ տարի ժամկետով:

11. Նախապատրաստական ֆակուլտետում /բաժնում/ օտարերկրացիները ուսումնասիրում են հայոց և այլ լեզուներ՝ հաշվի առնելով հետագա ուսուցման լեզուն և ընտրած մասնագիտությանը համապատասխան հանրակրթական առարկաները /մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, գծագրություն, աշխարհագրություն, պատմություն և այլն/:

12. Նախապատրաստական ֆակուլտետում ուսանելու ընթացքում օտարերկրացիները ծանոթանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

13. Նպատակի ձևով ուսման վարձի փոխհատուցմամբ /կրթաթոշակային տեղեր/ կամ միջպետական պայմանագրերի շրջանակներում սովորող օտարերկրացիները ապահովվում են կրթաթոշակներով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող սովորողների համար նախատեսված չափով: